

ԱՐԱԵՆ ԱՎԱՏԵԱՅԱԾ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ

ՊՈՇՂԻԱՆ

XXI ԴԱՐ

Գեմֆեր, զրֆեր, միսումներ

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19.0  
ԳՄԴ 83.3 (5Հ)  
Ա 774

**Հրատարակվել է  
ՀՀ մշակույթի նախարարության պատվերով**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀՀ ԱՆԿԱՄՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ**

***Խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան***

**Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան  
գրականության ինստիտուտի գիտխորհրդի  
երաշխավորությամբ**

**Ավանդայան Արմեն**

Ա 774 Անկախության պոեզիան. XXI դար. դեմքեր,  
գրքեր, միտումներ: Ուսումնասիրություն / Ա. Ավա-  
նդայան. - Եր.: Արմավ, 2017. - 312 էջ:

ՀՏԴ 821.19.0  
ԳՄԴ 83.3 (5Հ)

ISBN 978-9939-863-35-1

© Ավանդայան Արմեն, 2017  
© «Արմավ» հրատարակչություն, 2017



UNISE



**XXI** դարի հայ պոեզիան անկախության շրջանի գրականության նշանակալի վկայագիրն է: Տարբեր քննադատներ (Սերգեյ Սարիևյան, Ժենյա Քալանթարյան, Դավիթ Գասպարյան, Վազգեն Գաբրիելյան, Սեյրան Գրիգորյան, Արքմենիկ Նիկողոսյան, Սուրեն Աբրահամյան և այլք) տարբեր առիթներով անդրադարձել են ժամանակակից հայ բանաստեղծությանը՝ գրականագիտական տարբեր ժանրերով (գրախոսություն, գրական դիմանկար, տարեկան տեսություն, բանավիճային հոդվածներ և այլն) և հասունացել է հունձքը ժողովելու, ստեղծվածը գնահատելու ժամանակը՝ որպես հայոց գրականության ամենից անկախ շրջանի ներկայություն: Չնայած դրան, մեկնաբանելով հայ գրականության վերափոխությունը 1991 թվականին, մի շարք գրողներ և տեսաբաններ խոսք բացեցին «պոեզիայի՝ մահվան հոգեվարքում լինելու մասին»:

Հետմոդեռնիստական շրջանի գրական զանազան մտայնությունները հախուռն կերպով ներթափանցեցին հայ իրականություն, մասնավորապես՝ գրականություն: Իհարկե, իր հատկականությամբ պայմանավորված պոեզիան ավելի զգայուն էր նորարարական միտումներին, մանավանդ, որ միջավայրն էլ դասական քնարերգության ավանդները կազմաքանդելու ջանքի ընտրությամբ էր առանձնանում, ինչն սկսվել էր դեռևս 60-70-ական թվականներին մի շարք «հանդուգն» երիտասարդների կողմից:

Հետևաբար, նորի աշխարհընկալումը ենթադրում էր բանաստեղծական նոր արտահայտչաձևեր, որի ձևավորումը կախված էր շարժման շրջադարձով, ինչը հնարավորություն է ընձեռում մեկնաբանել հայ բանաստեղծու-

թյան ընթացքը անկախության շրջանում, անշուշտ, հաշվի առնելով ինչպես ժանրի վերելքի, այնպես էլ անկման փուլերը: Զուտ գրական տեսակետից նմանակերպ քննությունը հայ քննադատության հիմնախնդիրներից մեկն է, որը, թերևս, մեզանում նոր է ձևավորվում, և սկզբնավորման նախնական փուլում է... Սույն աշխատության ի հայտ գալը, որն ունի արդեն իր նախորդ գրական հանգրվանը (նկատի ունեմ վերլուծության ավանդները), մեկնաբանական իր նշանակությամբ կարևոր է, ինչպես բանասիրական հետազոտությունները առհասարակ: Հետևաբար, կռահելով ավանդականորեն եկող բանավեճի ընթացքը և հիմնավորելու համար անկախության պոեզիայի ուսումնասիրության մեր հարցապնդումը, պետք է փաստենք, որ «անկախության պոեզիա» հասկացությունը սուկ ժամանակահատվածով չէ պայմանավորված, այլև եզրույթի արժեք ունի: Ուստի պատահական չէ մեր կողմից XXI դարի շեշտադրումը: Այսինքն՝ պատմական իրողությունը առիթ է հանդիսացել նոր՝ կաղապարներից ազատագրված բանաստեղծության ստեղծման, որն անշուշտ պահպանում է ազգային ինքնության հաստատման տեսակետները, միևնույն ժամանակ դրանց տալիս նոր իմաստավորումներ: XXI դարում գրականության մեջ ամբողջովին փոխվում են տարածության և ժամանակի կարծրացած ընկալումները, և գրողը կյանքի ու իրականության հարաբերակցման նոր մոդելներ է առաջարկում: Այս անցումը միանգամից չի եղել: Նոր բանաստեղծության բեկումն իբրև պատմական իրողություն սկսվել է 1960-ական թվականներին, և գրականագետները ձիշտ են վարվում, որ հենց այստեղից են սկսում գնահատումը: Համենայն դեպս, այս ժամանակաշրջանում էլ սկսվում է պոեզիայի ձյուղավորումները, որոնք զարգացման տարբեր ընթացքներ են ստանում: Օրինաչափությունները,

որոնք առանձնացնում ենք այս աշխատության մեջ, ինչ-որ առումով մասնավոր հարցադրումներ են, սակայն կարող են օգտակար լինել հետագա հետազոտողներին՝ ավելի ամբողջական ուսումնասիրության համար:

Ելակետային է՝ բանաստեղծների և առանձին գրքերի ուսումնասիրությունը ժամանակի սոցիալ-հասարակական հենքի վրա: Սա մի կողմից առանձին, բայց և միասնական համակարգի հնարավորություն է տալիս, սակայն ժամանակի գրավոր տեքստի ամբողջականությունը, միևնույն է որոշակիորեն խաթարվում է:

Տարբեր փուլեր կարելի է առանձնացնել հայ բանաստեղծության վերջին շրջանում: 1960-ականների սերունդը (Հենրիկ Էդոյան, Հովհաննես Գրիգորյան, Արտեմ Հարությունյան, Արմեն Մարտիրոսյան, Դավիթ Հովհաննես) ի սկզբանե ստեղծում էր այնպիսի բնագիր, որն անսովոր էր տիրող բանաստեղծության բանարվեստին և անմիջապես հաղորդակցվում էր համաշխարհային նորագույն պոեզիայի զարգացումներին: Նույն հեղինակները տարբեր էվոլյուցիաներ ապրեցին և կարելի է ասել բանաստեղծության նոր որակ ստեղծեցին 1990-ական թվականներին: Այս դեպքում անցումային շրջանի վայրիվերումները, սոցիալական հիմնախնդիրները դառնալով գրանյութ, ինչ-որ տեղ ձևավորեցին լրագրային-հրապարակագրության շնչով շաղախված բանաստեղծություն, որն հաճախ հեռանում էր բուն բանաստեղծական արվեստից (նկատի ունեմ ասելու ձևը): Անբանաստեղծականությունն իր հերթին գոյացրեց հակաբանաստեղծականությունը (Արմեն Շեկոյան, Վիոլետ Գրիգորյան և այլք), երբ յուրաքանչյուր տեքստ վերածվում է բանաստեղծության, իսկ գրողներն անտեսում են բանաստեղծական կանոններն ու ընդունված գեղարվեստական ձևաչափերը: Սա ինչ-որ տեղ կապված էր նաև 2000 թվականի՝ աշխարհի

վերջին նախորդող տրամադրություններով: Պատահական չէ, որ 2000 թվականից հետո ոչ միայն գրականությունից դուրս մղվեց նման պոեզիան (բանաստեղծների մի մասը դադարեց գրել՝ Արմեն Շեկոյան, Հովհաննես Գրիգորյան և այլք, մյուսներն էլ շարունակեցին իներցիայով կամ կրկնելով նախընթաց ձեռքբերումները, կամ խարխափելով նորի փնտրտուքների մեջ՝ Դավիթ Հովհաննես, Արտեմ Հարությունյան, Հենրիկ Էդոյան): Նույն 2000 թվականից կարելի է ասել նոր փուլ է ձևավորվում, որը դեռևս կայացման ընթացքում է: Մի շարք բանաստեղծներ (Էդվարդ Միլիտոնյան, Հրաչյա Թամրազյան, Հակոբ Մովսես, Խաչիկ Մանուկյան, Սոնա Վան, Արտաշես Ղազարյան (Արամ), Ներսես Աթաբեկյան, Վահան Վարդանյան, Շանթ Մկրտչյան, Մանասե, Մանվել Միկոյան, Անդրանիկ Կարապետյան և այլք), ովքեր ժամանակի թե՛ մամուլային հրապարակումներով, թե՛ առանձին գրքերով, որոշակիորեն ամբողջացնում են XXI դարասկզբի հայ պոեզիայի դիմագիծը, 2000 թվականից հետո ավելի են ակտիվանում և կարելի է ասել հենց նրանց շուրջ է ձևավորվում բանաստեղծության զարգացման ժամանակակից ընթացքը:

Չափազանց լավ հասկանալով, որ XXI դարի հայ պոեզիայի հարցադրումները կարող են բազմազան ու տարաբնույթ լինել, մեր աշխատությունում առաջնորդվել ենք ոչ թե սերունդների տարանջատումով, այլև գեղագիտական ու գաղափարական ուղղությունների առանձին դիտարկումով, այսինքն՝ անհատական ու գեղագիտական մասնակիություններ են դիտարկվում «Դեմքեր» և «Գրքեր» գլուխներում, չնայած չենք խուսափել սերնդային առանձնահատկությունից, իսկ երրորդ գլուխը՝ «Միտումներ» խորագրով նվիրված է հիմնականում տեսական հարցադրումներին:



Առաջին գլխում հեղինակների առանձին քննությամբ առաջ են քաշվում դասական բանաստեղծության ու նոր ավանդների, նորարարության և բանաստեղծական ձևերի կազմաքանդման, լեզվածիսականության, միֆա-առասպելաբանության նոր կիրառումների և այլ հարցադրումներ:

Երկրորդ գլխում արդեն առանձին գրքերի վերլուծության ձևով առաջ է քաշվում ժամանակակից բանաստեղծության թեմատիկ ու աշխարհայացքային գլխավոր առանձնահատկությունները: Ժամանակային անժամանակության, ապոկալիպսիսյան տրամադրությունների և ջրհեղեղի, բանի ու գրի հասկացությունները 2000-ական թվականների պոեզիայի հիմնական մոտիվացիաներն են: Ահա թե ինչու վերլուծության համակարգում քննվում են այս մասնավոր հարցադրումները իբրև «ընթացք»: Բնականաբար ժանրային նկարագրի հիմնական աշխարհայացքային հանգրվանի քննությունը երկրորդվել է, որը բոլորովին այլ ուսումնասիրության հնարավորություն է ընձեռում:

Վերջին գլխում «Միտումներ», գերակշռում են տեսական հարցադրումները և գլխավոր հարցականը այսօրվա բանաստեղծական ընթացքի վերլուծությունն ու բանաստեղծների ստեղծածի գեղարվեստական արժեքի գնահատման անկարելիությունն է: Աշխատանքը վերլուծական համապատկերի տեսանկյունից շատ չի փոխվում: Հատուկ ուշադրություն ենք դարձրել նաև նորերին՝ երիտասարդ բանաստեղծներին, քանզի նորերը ոչ միայն սերնդային առանձնահատկությամբ են առանձնանում, այլև ի հայտ են բերում ընթացիկ բանաստեղծության ապագան: Ըստ էության, անկախության պոեզիայի ձևավորման վրա առավել վճռորոշ ազդեցություն պետք է

ունենան հատկապես երիտասարդները, որի ուրվագծումներն են միայն նկատելի:

Այս հենակետերն էլ պայմանավորում են սույն աշխատության կառուցվածքը:

Ինչպես նշեցինք՝ 2000 թվականը հայ գրականության, հատկապես պոեզիայի համար ամփոփիչ նշանակություն ունի: Մոտավորապես նման կարծիք շրջանառվել է հայ քննադատության մեջ: 1990-ական թվականների միտումները կարծես թե փակվում են այս տարեթիվով: Գուցե միլենիումը, նոր դարասկիզբը, չստացված ապոկալիպսիսը, պատերազմի ավարտը, սոցիալական կյանքի համեմատաբար բարելավումը, մի խոսքով՝ իրականության փոփոխությունը, անցյալում թողեցին այսպես կոչված 60-ականների գրական սերնդի առաջ քաշած շեշտադրումները:

Բանաստեղծության, նրա կառուցվածքի և գեղարվեստական արժեքի քննությունը կատարվում է աշխատության ընդհանուր համակարգի մեջ, և մենք հարցադրումն ընկալում ենք միասնության և ամբողջականից կախում ունեցող օրինաչափության ոլորտում, փորձում ենք ընդգծել գրի-տեքստի այնպիսի ընկալում, որ սահմանելի է թե՛ ժամանակի օրինաչափությունների և կառուցվածքայնության ընդհանրությունների միասնականության օրենքներով, թե՛ անհատական (հեղինակային) ընկալման զարգացումների ընթացքով:

Իհարկե, այս աշխատության աղբյուրները, որքանով որ առաջ քաշված հարցադրումները բարդ են՝ բազմազան են, և տեսական լուծումներ են պահանջում, թեև ակնհայտ է մեր մեթոդական նախընտրության ուղղվածությունը՝ մի քանի մեկնաբանությունների տեսակետից. այն է՝ զուտ բանաստեղծական մեր վերլուծումները սահմանել և մատնանշել գաղափարականության օրինաչափությունները:

Մյուս կողմից՝ ուսումնասիրության մեր նախընտրած մեթոդները համակցված են և պատմամշակութային մեթոդից անցում ենք կատարում հոգեբանական մեթոդին և երբեմն-երբեմն ընդմիջարկում համեմատական մեթոդով:

Հարցադրումները որքան էլ բարդ են, տեսական եզրահանգումների հիման վրա, դեռ հնարավորություն ունեն զարգանալու: Անկախության պոեզիան XXI դարում նոր գործառույթներ է ստանձնում: Իրականությունը և վավերագրումը երբեմն նույնանում են, ներկան իր սոցիալական-քաղաքական հարաբերություններով ներթափանցում է գեղարվեստական տեքստ և այլն:

Ուշագրավ երևույթ է անտիպոեզիան: Ճիշտ է, անտիպոեզիայի հակա-գեղարվեստական մեթոդը, իրեն սպառել է (կամ գրեթե սպառել է), այդուհանդերձ հարցի մեկնաբանության հարցադրումը, գրականագիտական իր ուղղվածությամբ, իր մեջ ներառում է տեքստի կառուցվածքային «էտարրեր», ինչպիսիք են տեքստի համադրականությունը կազմաբանող ներտեքստային համակարգը: Այս երևույթը կարծես թե որոշակի ազդեցություն է թողել անկախության պոեզիայի վրա: Գրեթե բոլոր բանաստեղծներն էլ ստեղծում են այնպիսի համադրական տեքստեր, որոնք բազմաձայն են ու պոլիֆոնիկ: Այսինքն, եթե բանաստեղծները, պատկերելով նոր ժամանակները, ընդգծում են ապագեղարվեստական իրականությունը, ուստի տեքստում հաճախ է հանդիպում խաղը, ստեղծագործություններում կիրառում են ժարգոնային և առօրեախոսակցական տարրեր, ժամանակի բարբերը, գեղարվեստական պատկերը դառնում է ինքնաբավ, անկախ, անգամ աննպատակ:

Վերլուծելով ժամանակակից բանաստեղծության ընդհանուր օրինաչափությունները, կարելի է սահմանել, որ անկախության շրջանի բանաստեղծության տեսակներ-

րը ունեն տարաբնույթ գեղագիտական չափանիշներ, որոնք հաճախ բախվում են իրար, գոյացնելով քառաս-  
յին, հակադիր ուղղություններով ընթացող մի դաշտ: Ուս-  
տի Նոր բանաստեղծությունն իր բազմազան ու տարաբ-  
նույթ գոյությամբ, թեև սահմանելի է Նորագույն տեսական  
մտքի համատեքստում, այնուհանդերձ ժանրային տեսակ-  
ների համադրության եղանակով բազմազան դրսևորում-  
ները չեն լրացնում միմյանց և չեն տարրալուծվում միմ-  
յանց մեջ, ինչն էլ սույն աշխատության խոցելի մասերից  
է: Սա պայմանավորված է նաև քննվող կյուրով, քանզի  
գործ ունենք դեռևս շարունակվող ընթացքի հետ, երբ  
սայթաքելը ոչ միայն հեշտ է, այլև անխուսափելի:

Սույն աշխատության տեսական ընկալումների արժե-  
քը հասկանալու համար, այնուամենայնիվ, անհնար է  
շրջանցել գրականության պատմության մեկնաբանության  
ելակետերը, ինչպես նաև հեղինակներին անդրադարձերը  
վերջին տարիներին, հատկապես գաղափարական արժե-  
քի քննության տեսանկյունը վերլուծելիս: Առաջինի դեպ-  
քում, ընդհանուր համակարգում, պատմության ընթացքը  
տարրալուծում է աշխատանքի բովանդակություն-կառուց-  
վածքի ոլորտում ներառելով դրա մեջ առանձին հարցադ-  
րումներ: Նկարագրելով Նորագույն բանաստեղծությունը,  
որքան էլ կատարենք իրողությունների բնութագրումներ,  
նշենք, որ այդ իրողությունները ինչ-ինչ կերպ արտա-  
հայտվել են Նոր ժամանակների հեղինակների պոետիկա-  
յում: Դրան զուգահեռ ծավալվում ենք նաև առանձին գր-  
քերի շուրջ, որը ընդհանուր միտման կոնտեքստում  
հնարավորություն է տալիս համառոտ ներկայացնել XXI  
դարի անկախության պոեզիայի ընթացքի «մասին-և ու  
ինչպես-ը», այսինքն՝ բովանդակությունն ու կառուցվածքը:  
Մեկնաբանության մեջ, այնուհետև, զարգացնելով հար-  
ցադրումները, մենք առանձին հեղինակների դեպքում

անդրադառնում ենք տեքստին և գրին իբրև «*բան և խոսք*» փորձելով ձանաչել նորագույն բանաստեղծության ձևավորման ընթացքը, ուր նշանակություն ունեն նշաններն ու ծածկագրերը, այլտեքստերը, միջտեքստային (ինտերտեքստային) հարաբերությունները և այլն: Այստեղ է մեր խնդրադրման հիմնասյունը, քանզի վերլուծվում է «բովանդակության ձևի» աշխարհընկալումը:

Զուգահեռ մեկնաբանվում է բանաստեղծի կերպարը արդի հայ գրականության արժևորման համակարգում:

Բանաստեղծներին հաճախ պետք է ընկալել որպես գրող-ժամանակագիր, քանի որ նրանց տեքստերում հանդես են գալիս կոնկրետ փաստն ու դրա համաժամանակյա ընկալումը: Բանաստեղծի հայացքը այս պարագայում չեզոք չէ և նման է ինքնախոստովանությունների. հուզականության ոլորտը մղվում է երկրորդ պլան և տեքստը կայանում է սոսկ իբրև տեքստ, միաժամանակ, ի հայտ բերելով ժամանակի կերպարը: Եվ պատահական չէ, որ ժամանակի վերաբերյալ անդրադարձը կարևոր տեղ է զբաղեցնում սույն աշխատության մեջ:

Մի քանի դիտարկումներ ևս:

Գուցե ծիշտ կլիներ, որպեսզի առանձին անդրադառնայինք նաև պոեմի ժանրին, որն անշուշտ, որոշակիորեն պասսիվացել է, այնուամենայնիվ, հետաքրքիր դրսևորումներ ի հայտ է բերում 2000 թվականից հետո: Ժանրը դեռևս կենսունակ է, և ուշագրավ դրսևորումներ է ունեցել (Էդվարդ Միլիտոնյանի, Վարդան Հակոբյանի, Արտեմ Հարությունյանի Արտաշես Արամի և այլոց պոեմները): Սակայն, սա թերևս, առանձին ուսումնասիրության կյուֆ է:

Հաջորդ դիտարկումն այն է, որ աշխատության մեջ անդրադարձը արդի բանաստեղծության հերոսին ներխուժված է գլուխներում, այնինչ անկախության շրջանի

բանաստեղծության հերոսն արտահայտված է խիստ ընդգծված ես-ով և կարելի է ասել տեղի է ունենում ես-ի տիպականացում: Խոսքս բանաստեղծի անձնական զգայություններին ու ապրումներին չի վերաբերում, այլև գրողի այն ջանքին, երբ նա փորձում է ընդգծել իր ես-ը, դառնալով մի տեսակ եսակենտրոն: Գուցես հերոս-բանաստեղծ-ես հարցադրումն արժանի է առանձին ծավալուն ուսումնասիրության:

XXI դարի հայ բանաստեղծության մեջ անընդհատ հղումներ են հանդիպում քրիստոնեական ավանդներին, որոնց բազմաբնույթ դրսևորումներն ակներև են: Ուստի փորձել ենք դրանց մի քանի ցայտուն դրսևորումներ մատնանշել:

Ուզում ենք անդրադառնալ նաև գնահատանքին և բանավեճին: Գիտենք, որ մի շարք բնութագրումներ բանավիճային կարող են լինել, անգամ ծայրահեղ, սակայն պայմանավորված է աշխատանքի ամբողջականությամբ, ուստի պատրաստ ենք բանավիճային հարցադրումների՝ անգամ սխալվելու գնով:

Անկախության շրջանի հայ բանաստեղծության արժեքը նշանակալի է որպես XX դարավերջի և XXI դարասկզբի իրողություն, և ունի գրական ամբողջություն: Մենք ունենալով մեկնաբանության մեր ելակետը, կփորձենք տեսական համակարգվածության ենթարկել և վերլուծել այս շրջանի երկրորդ ժամանակահատվածի՝ XXI դարի բանաստեղծությունը՝ հստակ սահմանելով մեր ուղղվածությունը՝ գաղափարական հարցադրումներ: Առաջնայինը գրականության ամբողջականության հարցն է՝ անկախ նրանից՝ խոսքը վերաբերում է անբանաստեղծական, լեզվապաշտ, թե՛ հակաբանաստեղծական բանաստեղծությանը:



ԴԵՄՔԵՐ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ . . . . . 3

## ԴԵՄՔԵՐ

ԷՂՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ.  
ՀՆԻ ՈՒ ՆՈՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԽԱԶԱԶԵՎՈՒՄՆԵՐ . . . 17

ՍՈՆԱ ՎԱՆ.  
ԼՈՒՌ ՄԵՆԱՄԱՐՏ ԿԱՄ  
ԸՆԴԴԵՄ ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԻ . . . . . 41

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ.  
ՀԵՏՄՈԴԵՆՆԻՉՄ՝ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒԺՈՎ . . . . . 71

ՇԱՆԹ ՄԿՐՏՉՅԱՆ.  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ  
ԻԲՐԵՎ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ . . . . . 82

ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆ.  
ՆԵՐԴԱՇՆԱԿ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ . . . . . 96

ԳԵՎՈՐԳ ԹՈՒՄԱՆՅԱՆ.  
ՆՐԲԱԹԵԼԵՐՈՎ ՀՅՈՒՍՎԱԾ ՄԻ ԱՇԽԱՐՀ . . . . . 111

ՀՐԱԶՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ.  
ԵՐԲ ԲԱՌԸ ՄԱՐԴ Է, ՄԱՐԴԸ՝ ԹՈՉՈՒՆ . . . . . 125



ՀՐԱՉՅԱ ԲԵՅԼԵՐՅԱՆ.  
ԸՆԴՄԵՁ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ . . . . . 142

ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆ.  
ԴԵՊԻ ՍԿԻՉԲ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՃԱՄՓԱՆ . . . . . 151

ԽԱԶԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ.  
ԽՈՍՔԻ ՏԱՐԵՐՔ . . . . . 159

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ.  
ԽՈՀԱՉԳԱՅԱԿԱՆ  
ԿԵՆՍԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 168

**ԳՐՔԵՐ**

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԲՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ . . . . . 183  
*Սերո Անտոնյան, «Վերջին տերևաթափ»*

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԿԻՉԲ  
ՎԱՂՎԱ ՔԵՐԹՈՒԹՅԱՆ . . . . . 189  
*Արտաշես Արամ, «Դիմակների բեմ կամ  
հասարակների թաղամաս»*

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՅԵՑՄԱՆ  
ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 194  
*Մանվել Միկոյան, «Անդունդի եզրով քայլողը»*

ՀՈՒՅՄԻ, ՀԱՎԱՏԻ ՈՒ  
ԿԱՐԵԿՅԱՆՔԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ . . . . . 199  
*Նոնա Պողոսյան, «Ապրելու կանխավարկած»*

ՔԱՈՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՔԱՈՍ . . . . . 203  
*Գոհար Գալստյան «Ձրօրհնության կարգով»*

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ  
ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՍԿԻՋԲՆ Է . . . . . 211  
*Գոհար Գալստյան, «Տանիքի դարպասներ»*

ԲԱՌՆ ԻՐ ՀԱՐՈՒՍ ԸՆԴԵՐՔՈՎ . . . . . 216  
*Դարիկո Խաչատրյան «Անմեռ երգեհոն»*

ԱՐՏԱՌՈՑ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԴՈՔՍԸ . . . . . 223  
*Հասմիկ Սիմոնյան «Լուսնոտ բառեր»*

ԱՊՐՎԱԾ ՏՈՂ . . . . . 228  
*Լուսին Ղազարյան, «Ես քոնը չեղա»*

ՃԱԿԱՏԱԳՐՈՎ ՄԱՄՆԱԿԻՑԸ . . . . . 234  
*Հրաչյա Մելիք-Սարգսյան, Սպասումներ*

ԵՐԲ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԲԱՌ . . . . . 238  
*Նաիրա Զուլիալյան, «Գիշերաթիթեռ»*

ԽՈՍՔ ԼՈՒԹՅԱՆ . . . . . 243  
*Նշան Աբասյան, «Ուրիշ լռություն»*

ՀՐԴԵՀՎԱԾ ՀՈԳԻ . . . . .	248
<i>Քրիստինե Հովսեփյան, «Սև թուղթ»</i>	
ՄԻՐՈՒՑ ՄԻՆՁԵՎ ՀԱՅՀՈՅԱՆՔ . . . . .	252
<i>Լուսինե Հովակիմյան «Գետնից բարձր»</i>	

**ՄԻՏՈՒՄՆԵՐ**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ . . . . .	259
ՆՈՐ ՊՈՆԶԻԱՅԻ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ . . . . .	266
ՆՈՐԵՐԸ . . . . .	285
ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ 2016-2017 ԹԹ. . . . .	297

**ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ  
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊՈԵԶԻԱՆ  
XXI դար**

**АРМЕН АВАНЕСЯН  
ПОЕЗИЯ НЕЗАВИСМОСТИ  
XXI век**

Խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան  
Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան  
Ձևավորումը՝ Արշալույս Արզումանյանի  
Լուսանկարը՝ Գարեգին Աղաբեկյան

Տպագրությունը՝ «Նովել հրատարակություն» ՍՊԸ  
Հասցե՝ Ք. Երևան, Մայիսի 9 փ. 23

Տպագրությունը՝ օֆսեթ  
Չափսը՝ 60x84 1/16  
Ծավալը՝ 19.5 տ.մ.  
Թուղթը՝ օֆսեթ 80 գ. 1.8 ծավալային խշռով  
Տառատեսակը՝ Ghabuzian1600NS  
Տպաքանակը՝ 400



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.  
հեռ.՝ 34-73-35  
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.  
тел.՝ +374-10-34-73-35  
Email: armav-hrat@mail.ru